

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ-ում 2022թ. փետրվարի 21-ից 27-ը դիտված հիդրոոդերնոլոգիական պայմանների և շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

Փետրվարի 25-ի ցերեկը, 26-ին առանձին շրջաններում դիտվել են թույլ տեղումներ: Տեղումների գումարային քանակը կազմել է 0,3-7մմ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 21-23-ին բարձր է եղել նորմայից 4-7, փետրվարի 24-27-ին՝ 6-10 աստիճանով:

Օդի ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է Սյունիքում՝ հովիտներում՝ +19...+22°C, նախալեռներում՝ +10...+16°C, Տավուշում՝ +15...+19°C, Արմավիրում՝ +18°C, Լոռիում՝ +13...+18°C, Արարատյան դաշտում՝ +16...+18°C, Վայոց ձորում՝ նախալեռներում՝ +16°C, լեռներում՝ +8°C, Արագածոտնում՝ նախալեռներում՝ +10...+16°C, լեռներում՝ +4...+6°C, Կոտայքում՝ նախալեռներում՝ +13°C, լեռներում՝ +8...+10°C, Շիրակում՝ +6...+11°C, Գեղարքունիքում՝ +6...+10°C, Երևանում՝ +15...+18°C:

Օդի նվազագույն ջերմաստիճանը դիտվել է Արագածոտնում՝ լեռներում՝ -4...-8°C (Ապարան՝ -10°C), նախալեռներում՝ -1...-2°C, Գեղարքունիքում՝ -5...-10°C, Վայոց ձորում՝ լեռներում՝ -8°C, նախալեռներում՝ -1°C, Շիրակում՝ -5...-9°C (Աշոցքում՝ -16°C), Կոտայքում՝ լեռներում՝ -4...-10°C, նախալեռներում՝ -1°C, Արմավիրում՝ -2°C, Լոռիում՝ -2...-6°C, Տավուշում՝ 0...-3°C, Արարատյան դաշտում՝ 0...-2°C, Սյունիքի հովիտներում՝ -2...+4°C, նախալեռներում՝ 0...-2°C (Սիսիան՝ -10°C), Երևանում՝ -1...-3°C:

Փետրվարի 23-ին Աշոցքում դիտվել է 500մ, 26-ին՝ Անանուն լեռնանցքում 200մ տեսանելիությամբ մառախուղ:

Փետրվարի 25-ին Մասրիկում, Թալինում, Արմավիրում և Արտաշատում դիտվել է քամու ուժգնացում մինչև 17-19մ/վրկ արագությամբ:

Փետրվարի 28-ի դրությամբ ձյան ծածկի բարձրությունը Արագած բ/լ-ում կազմում է 85սմ, Զերմուկում՝ 53սմ, Ամբերդում՝ 43սմ, Հրազդանում՝ 41սմ, Ապարան լճայինում՝ 33սմ, Ամասիայում՝ 29սմ, Ապարանում, Ֆանտանում, Սեմյոնովկայում և Աշոցքում՝ 11-15սմ: Արարատյան դաշտում, Տավուշում, Լոռիում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայում է:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում (20.02.22-27.02.2022թթ. տարբերությունը) բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.38մ (27.02.22թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 17 սմ-ով: